

նեն, կ'ըսեն 1640-ի Կովորայի հրովարտակը եւ ուրիշ շատ մը եկեղեցական գրքեր:

«Մինոնք աւելի դէշ են քան հեթանոսները, անոնց հաւաքուած տեղը եկեղեցի չէ, այլ կըռատուն: «Հայկական կռատան չուրջը» բացատրութիւնը կը յիշէ Նիք. Քօսթին (Letopisite, հատոր Բ. էջ 42):

«Ճշմարիտ հաւատացեալները այսպիսի դոյութենէ մը հեռու պահելու համար, Կովորայի հրովարտակը կ'ըսէ. «Ով որ կը ճաշէ հալու մը կամ Պաղարիկեանի մը, կամ ուրիշ որեւէ հեթանոսի հետ, եւ մանաւանդ որ սէր մը կը մշակէ անոնց հետ, այդպիսիներուն Աստուծոյ օրէնքը կը պատուիրէ որ հրաժարին այդ բանէն»:

«Պիտէրիքանի Արսէնիէ (1650-ի տառնները գրուած ձեռագրի մը մէջ որ ռումանական Ակադեմիան կը գտնուի) որ մեկնաբանած է Սաղմոսի 36-րդ երգը, կը սրբադէշ զանիկա, մեղաւոր բառը փոխելով հայու, իբրեւ հոմանիշ անոր եւ իբրեւ հակադրութիւն ուղիղ եւ քրիստոնեայ բառին:

«Էգ շունին ժողովուրդը Արմէանֆա (հայուհի) կ'ըսէ, եւ արու շունին Կարապետ՝ անուն, զոր հայերը կուտան Ս. Յովհաննէս Մկրտչին: Այդպէս պատմեցին ինծի Մուսէլի, Ռըմնիքու Սարաթի, Էւայլն, գիւղական ուսուցիչները:

«Երբ դէշ բանի մը մասին է խօսքը՝ ժողովուրդը հայկական (Armenese) մակդիրը կուտայ. ինչպէս պուպա արմէնաւա (հայկական վէրք): Այսպէս կը յիշատակէ Թէօօթը (Poesii Populare, էջ 359):

«Յոպոպը, որ դարչ թռչուն մըն է, հայկական կկու (Cue Armenese) անունը կը կըրէ, ինչպէս կը յիշատակեն Մարեան (Ornit հատոր Բ. էջ 173) եւ Քրէանկա (Convorbire Leterare, 1881, էջ 8) Հաշտէու կը յիշէ նաեւ «Armennul e boccin la cap» բացատրութիւնը, որ ուրիշ բան չէ, բայց եթէ Պոլսոյ մէջ յոյներուն կողմէ հայերուն տրուած «Պօքճի էրմէնի» անարգական տիտղոսը:

Հաշտէու կը յիշատակէ նաեւ մոլորովական հին առած մը որ կ'ըսէ. «Հայը կը վճարէ խեղանդամ ձիուն համար», այսինքն՝ ինչ ալ ըլլայ խնդիրը՝ հայն է որ վնասը կը քաշէ եւ

պատիժը կ'ընդունի: Ու այս մտայնութիւնը անոր համար, որովհետեւ հայը նկատուած էր հեթանոս եւ պիղծ, հետեւաբար արհամարհելի ու զանցառելի:

Ու իբրեւ եզրակացութիւն այս բոլորին Հաշտէու կ'ըսէ. «Ըլլայ կրօնական տարբեր սովորութեանց բերմամբ, ըլլայ իրենց մեկուսացած կենցաղին պատճառով, ըլլայ Բիւզանդիոնէն փոխանցուած հակակրօնական մը հետեւանքով, ռումէնները չէին սիրեր հայերը», եւ «ժողովրդական ատելութեան պատճառով հայերը մէկէ աւելի անգամներ հալածուեցան Ռումանիոյ մէջ» ու «ամէն անգամ որ իշխաններու անդթութիւնը կամ ժողովրդական ցատուը զանոնք կը քէշ Մոլտովայէն, հայերը ապաստան կը փնտռէին Արտէալի եւ Լեհաստանի մէջ»: Ու Հաշտէու կը յիշէ երեք հալածանքի դէպք, — այն որ 1551-ին տեղի ունեցաւ Շթէֆան Ռաուշ Վօյվօտին կողմէ, այն որ տեղի ունեցաւ 1564-ին Տէսփօթ Վօտայի աղէտէն յետոյ, եւ 1671-ին Տուքա Վօտայի օրով պատահածը:

1822 Սեպտ. 5-ին, այսինքն՝ ռուսական զբաղման ատեն, Մոլտավիոյ եւ Վալաքիոյ իշխանապետութեանց զիւանին նախագահ ռուս հրամանատարը, թիւ 3520 հրամանագրով մը կ'ազդարարէ ռումանական իշխանութեանց թէ հայերը պէտք է միւս քրիստոնեաներուն հաւասար վերաբերման արժանան, թէ անոնց եկեղեցիներուն մէջ զինուոր չդրուի, Էւայլն: Միւս եւնոյն ատեն կը հրամայէ յանդիմանութիւն ուղղել Անաստաս Պաշոտ Հաղմանին, որ ի Եաշ նոյն տարուան Յունիս 22-ին գրած իր մէկ թուղթին մէջ յանդգնած էր մեհեան կոչել հայ եկեղեցին: Սոյն հրամանագրին ռուսերէն, հայերէն եւ հայատառ թուրքերէն վաւերացեալ մէկ պատճէնը կը գտնուի Պուքրէշի հայոց զիւանատան մէջ:

Օրթոդոքս կղերին տարածած բարբառնալիքները երբեմն ալ այն հետեւանքը կ'ունենային, որ հայերը, նոյնիսկ այնպիսի ժամանակամիջոցներու մէջ՝ երբ կը վայելէին օրուան իշխանութեանց ասպնջականութիւնը եւ շատ մը առանձնաշնորհումներ, ստիպուած կ'ըլլային կղերացած ապրել:

Ասկէ զատ, հայուն ինչքը կ'երեւի թէ շատ